Մուշեղ Սարվարյան

Աղբ գրկեցը

ԳԻՏԱԿԱՆ-ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

ՊՐԱԿ 1

40.000 ՐԻԱԼ-ՄՐՑԱՆԱԿՈՎ

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԸ ամենահեռահարբիր պատանեկական — գրական — երեվակայական պատմվածքն է, որը կարդացվում է անօրինակ լարվածությամբ սկզբից մինչև վերջ եվ կոչված է լինելու ամեն մի աշակերտի սեղանի զարդը:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ երկրորդ պրակը լույս է տեսնելու առաջին (մրցանակային) պրակի սպառումից հետո, իսկ յուրաքանչյուր հետեվյալ պրակը՝ ՀԻՆԳՇԱԲԹԻ օրերը:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ վաճառքից գոյացած ամբողջ հասույթը հատկացվելու է «ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԱՏ»-ին:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ առաջին պրակի արժեքն է 10 դրամ: Բոլոր օրինակները համարակալված են ու կնքված «ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԼԱՏ»-ի կնիքով եվ այդ օրինակներից մեկը վիճակով ստանալու է 40,000 դրամ արժեք ունեցող մի «ԲՐԱՏՖՈՐԴ» տեսակի ինքնաշարժ:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ հետեվյալ պրակների արժեքը լինելու է 5 դրամ:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ այս մրցանակային պրակի թիվը, ինչպես նաեվ ստանալու պայմանները, տպված են կազմի հետեվը:

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԻ պրակները կարող եք գնել հայ գրավաճառների մոտ եվ հայկական դպրոցների գրասենյակներից:

891,921

Ազգային գրադարան
Yerevan

388

ՆՈՐ ԳՈՒԼԻՎԵՐԸ

1.

Գուլինի եվ Ավագի վերադարձը կրկեսից:
Գուլիկի անհայտանալը:

Այն բոլորը, ինչ որ գրված է այս գրքում՝ եղելություն է։ Նոր Գուլիվերը մի սովորական, տասներկու տարեկան տղա էր, որի հետ հուլիս 24-ին, գիշերվա ժ. 10 և կեսին կատարվեց մի սոսկալի, անհավատալի դեպք։

Այդ օրը Գուլիկը իր մեծ եղբոր՝ Ավագի հետ, գնացել էր կրկես։ Ամենից շատ այնտեղ նրան դուր էր եկել Կարմիր Դիմակ կոչվող հսկայամարմին ըմբիշը, որը հինգ բոպեյում հաղթեց մայրաքաղաքի ամենահռչակավոր ըմբիշ Բախիտովին և ապա գերանի վրա նստեցնելով 12 հոգի, հանգիստ դրեց գերանը ուսին ու սկսեց քայլել շրջանի մի ծայրից մյուսը։

— Ուժ եմ ասում հա... — հիացած բացականչեց Գուլիկը,— ես որ այսքան ուժեղ լինեյի՝ էլ ինչ էի ուզում։

— Բախիտովին հաղթեց... — զարմացած շշընջաց Ավագը,— էս ով է, որտեղից է եկել։

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՆԳԵՐՈՐԴԱԿԱՆ ԳՐՍԳՍՐԱՆ

Կրկեսը զոռում էր անվերջ ծափահարություններից։ Մարդիկ հիացած բղավում էին, աղաղակում։

— Բռավո Կարմիր Դիմակը, կեցցե՛ մեր նոր ըմբիշը։ Իսկ Կարմիր Դիմակը, ցած գնելով ուսից ծանր բեռը, ուրախ ժպտում և օդային համբույրներ էր ուղարկում հանդիսականներին։

Ծրագիրը վերջացավ։ Մարդիկ սկսեցին ցրվել իրենց տները։ Գուլիկն ու Ավագը ապրում էին բավական հեռու և որովհետև ժամանակի ուշ լինելու պատճառով հանրակառք չկար՝ որոշեցին վերադառնալ ոտքով։

Իրենց փողոցի անկյունում Ավագը մտավ ծանոթ խմիչքեղենի խանութ, հայրիկի տված ղրամով երշիկ գնելու, իսկ Գուլիկը բանալին վերցնելով արագացրեց քայլերը, որ շուտ հասնի։

Ավագը գնեց երշիկ, վճարեց ղրամը և խանութից դուրս գալով, դիմեց գեպի տուն։ Մոտենալով տանը նա վստահ էր, որ Գուլիկը դռները բաց թողած կլինի և շատ զարմացավ դռնելով դուռը փակ։

— Երևի մոռացել է,— մտածեց Ավագը և կարճ սեղմեց զանգի կոճակը, չցանկանալով անհանգստացնել քնած տնեցիներին։ Փոքր ինչ սպասելուց հետո նորից զանգահարեց, այժմ ավելի երկար, տարակուսելով թե ինչու է Գուլիկն ուշանում։

— Այսքան շուտ պառկած չի լինի, ի՞նչ է պատահել էս տղին,— բարկացած մտածում էր Ավագը։

— Ո՞վ է։

Հայրիկի ձայնն է։ Ինչու՞ է հայրիկը բացում դուռը։ Մի՞թե Գուլիկը այսքան շուտ անկողին մտավ։

— Ես եմ, հայրիկ, բացիր։

Դուռը բացվեց։ Հայրիկը քնաթաթախ աչքերը ճմռեց ու նայեց որդուն։

— Ինչու այսքան ուշացաք։ Գուլիկն ուր է։

— Գուլիկը չի՞ եկել...

— Ինչպե՞ս... Միթե միասին չէիք։ Հարցրեց հայրիկը զարմացած։

— Մի բոպե առաջ բաժանվեցինք։ Ես մտա անկյունի խանութը երշիկ գնելու, նա բանալին վերցրեց ու առաջ ընկավ, որ մինչև իմ հասնելը՝ դուռը բացի։

— Չի եկել... — Անհանգիստ ասաց հայրը, — դուրս եկ տես ուր է կորել, մինչև ես էլ հագնվեմ՝ գամ։

Ավագն իսկույն վերադարձավ եկած ճամբով, ուշադիր նայելով աջ ու ձախ։ Մութ էր։ Էլեկտրական ճրագների աղոտ լույսը թույլ չէր տալիս դիտել հեռուն։ Անկյունի խանութպանը, որը քիչ առաջ փաթաթեց Ավագի երշիկը, արդեն խանութի փեղկերն էր փակում։

— Գուլիկին չե՞ք տեսել... — հարցրեց Ավագը, ինքն էլ զգալով տված հարցի անիմաստ լինելը։

— Գուլիկի՞ն, — պատասխանեց խանութպանը նայելով Ավագին ոտից գլուխ, — էս ժամանակ... Ինչու, միթե տանը չի։

Ավագն արագ պատմեց եղելությունը և ավելի անհանգիստ խանութից դուրս վազեց։

Հայրը արդեն գտել էր հերթապահ ոստիկանին և արագ-արագ բացատրում էր նրան Գուլիկի անհայտանալու մասին։ Ավագենց ծառան, Սիմոնը, դուրս էր եկել կիսահագնված, լապտերը ձեռին։ Դռների մեջ երևացին մոր և տատիկի դունատ, անհանգիստ դեմքերը։

— Ի՞նչ է պատահել Գուլիկին...

— Ո՞ւր է Գուլիկը...

— Գուլիկը չկա... պատասխանեց հայրը խուլ ձայնով։

. . . . . .

— Ալո, ալո, խոսում է № 240 հեռաթապահ ոստիկանը։ Հինգ րոպե առաջ իմ հսկողության շրջանում, Քոնթի քառուղուց մինչև № 16 տունը, անհայտացել է Գուլիկ անունով տասներկու տարեկան մի տղա։ Նշանները սրանք են.— դեմքը թուխ, ճակատը լայն, մազերը սև, աջ այտին՝ սպի, ինքը նիհար։

— Անմիջապես հսկողության տակ առեք բոլոր տները Քոնթի քառուղուց մինչև Անգլիական դեսպանատուն։ Այս րոպեին կուղարկենք մի խումբ ոստիկան հարկ եղած հրահանգներով։

—Մի խումբ ոստիկան,— հարցրեց Գուլիկի հայրը թերահավատությամբ ու կասկածով։

— Այո, պարոն,— պատասխանեց ոստիկանը,— գուցե ձեզ տարօրինակ թվա եթե ասեմ, որ Գուլիկի անհայտանալը ոստիկանությանն ավելի է հետաքրքրում, քան ձեզ, որովհետև դուք դեռ չգիտեք, որ սա երեխա անհայտանալու երրորդ դեպքն է և բոլոր դեպքերը տեղի են ունեցել այս շրջանում։

— Ի՞նչ եք ասում... — սարսափած բացականչեց դժբախտ հայրը,— ուրեմն դուք ենթադրում եք, որ Գուլիկը գողացված է՞...

— Ես չեմ ենթադրում, այլ համոզված եմ, որ

Գուլիկն այս բոպեիս գտնվում է ձեր բնակարանին կից տներից մեկում և օգնության կարիք ունի։

— Ուրեմն... ի՞նչ պիտի անել։

— Ես մենակ ոչինչ չեմ կարող անել, մինչև չհասնի կենտրոնից ուղարկված ոստիկանների ջոկատը, շրջակա բոլոր տները խուզարկելու հրամանագրով։

Ոստիկանի խոսքը ընդհատվեց գիշերային լռությունը պատռող ոստիկանական մեքենայի շչակի ահարկու ոռնոցով... Բոլոր տների պատուհանները իրար հետևից սկսեցին բացվել։ Մարդիկ արթնանում և պատուհաններից հետաքրքիր, քնաթաթախ դեմքերով դուրս էին նայում։

Յուրաքանչյուր տան դռան առջև պահակ կանգնեց մի ոստիկան։ Տնից դուրս եկողը իսկույն ձերբակալվում էր։ Գաղտնի ոստիկանները սկսեցին խուզարկել բոլոր տները, իսկ վախեցած բնակիչները սոսկումով շշնջում էին.

— Ի՞նչ է եղել... ինչու են խուզարկում...

— Ի՞նչ է պատահել...

Եվ չորս կողմից լսվում էր նույն սարսափազդու, կարճ պատասխանը.

— Երևիա է գողացվել...

Տների խուզարկությունը ոչ մի օգուտ չտվեց։ Փոքր ինչ կասկածի տեղիք տվեց միայն № 20-րդ տան երրորդ հարկում բնակվող մի ծեր գիտնականի բնակարան, որի տերը, ինչպես հայտնեցին հարևանները, արդեն մի շաբաթ կլիներ մեկնել է գիտական ինչ որ արշավախմբի հետ դեպի Դեմա-

վենդ։ Կասկածի պատճառը Գուլիկենց բնակարանի բանալին էր, որն ընկած էր այդ տան փողոցի դռների մոտ։ Գիտնականի սենյակի դուռը ստիպված եղան կոտրել։ Բնակարանը բաղկացած էր երեք սենյակից, որոնցից վերջինը և ամենաընդարձակը հարմարեցված էր աշխատանոցի համար։ Աշխատանոցի մեծ ու լայն լուսամուտը նայում էր դեպի բակ, սկսելով ուղիղ սենյակի հատակից։ Ապակյա պահարաններում չափազանց կանոնավոր կերպով շարված էին տարբեր գործիքներ, դեղորայք և բազմաթիվ սրվակներ։

Ամեն ինչ ծածկված էր թեթև, հավասար փոշիով և այդ հանգամանքը ցույց էր տալիս, որ տանտերը իրոք բավական ժամանակ է տուն չի եկել։

Բնակարանը խուզարկելուց հետո, երբ ոստիկանները դուրս եկան սենյակից, ոստիկանապետին մոտեցավ երիտասարդ խուզարկու Ցարջամին և ականջին ինչ որ բան շշնջաց։ Ոստիկանապետը զարմացած նայեց նրան.

— Դուք չե՞ք սխալվում։

— Ոչ, պարոն պետ։

— Երկու ոստիկան պահակ կանգնեցնել այս դռների մոտ,— հրամայեց ոստիկանապետը տասնապետին,— ոչ ոք, բացի պ. Ցարջամից, չմտնի այս բնակարանը։

Տների խուզարկությունը վերջացավ լուսադիմին։ Ոստիկանական ուժերը հոգնած ու անքուն վերադարձան՝ առանց մի դրական արդյունք ձեռք բերելու։ Գուլիկի հայրը, ցրված, պղտոր հայացքով սենյակում հետ ու առաջ էր քայլում, մայրը երե-

սի վրա ընկած անկողնին, հուսահատ լալիս էր, իսկ տատիկը զարկում էր ծնկներին չորացած ձեռքերը և անընդհատ կրկնում.

— Բալա ջան, բալա... էս ինչ հոգ եկավ գլխիս...

Երեկոյան թերթերը լույս տեսան հետևյալ հուզիչ վերնագրերը կրող հոդվածներով.—

— «Նորից մի զոհ»...

— «Ե՞րբ պիտի վերջ գտնի այս խայտառակ դրությունը»։

— «Կառավարության ուշադրությունն ենք հրավիրում...»

Իսկ ձայնասփյուռի բարձրախոսները աղաղակում էին հրապարակներում, ճաշարաններում և կաֆեներում.—

— Գուլիկ Ալոյանի անհայտանալը երրորդ դեպքն է մի ամսվա ընթացքում։ Անհայտ ոճրագործները գաղտնի նպատակների համար տղաներ են գողանում։ Ոստիկանությունը խնդրում է բոլոր քաղաքացիներից աչալուրջ լինել։ Ուշ ժամին երեխաներին դուրս չթողնել և կասկածամիտ լինել յուրաքանչյուր անցորդի նկատմամբ»։

Թերթերը աղմկեցին, աղմկեցին ու լռեցին։

Իսկ Գուլիկը չկար։

Գուլիկն անհայտացել էր։

388

2.

Խորհրդավոր սենյակի բնակիչը: Բնագետ թե՞ ոգեւորած: Էլեկտրական շարժակով Մեծ Անթեվը: Հրաշալի փոքին: Գուլիկի կերպարանափոխությունը:

Ավագից բաժանվելով Գուլիկը քայլերն արագացրեց։ Մի սև, քարաշեն, եռահարկ տան դռների մոտ կանգնած էր մի պառավ կին և աշխատում էր բացել կողպված դուռը։

— Լսիր, տղա,—կանչեց կինը փոքր ինչ խռպոտ ձայնով,—օգնիր խնդրում եմ, դուռը չի բացվում։

Գուլիկն արագ մոտեցավ. կինը ավելց նրան լուցկու տուփը, որ լուսավորի և ինքը բացեց դուռը։

— Շատ ապրես, տղաս, շնորհակալ եմ,— ասաց կինը և Գուլիկը շրջվեց, որ հեռանա, երբ հանկարծ զգաց գլխին մի ուժեղ հարված։ Նա ուզեց ճչալ, սակայն չկարողացավ... Լայն բացած բերանից դուրս թռավ խուլ անքոց և տղան զգաց ինչպես մի զույգ ուժեղ ձեռներ գրկեցին իրեն ու տարան վերև։

Այնուհետև Գուլիկը գիտակցությունը կորցրեց։

Ուշքի եկավ ցրտից։ Պառկած էր մի լայն, ընդարձակ սենյակի սառը հատակին։ Ձեռքերը և ոտքերը կապոտած էին։ Նայեց շուրջը, ոչոք չկար։ Սենյակի մեջտեղ գտնվում էր մի երկար նավակ, երկու փոքրիկ անիվներով։ Նավակի քիթն ուղղված էր դեպի լայն լուսամուտը, որտեղից երևում էր պարզ, աստղալարդ երկինքը։ Ուժեղ քամին, որը սառեցրել էր Գուլիկին, փչում էր նավակի անձայն պտտվող փոքրիկ օդապտուտակից։

Հանկարծ տիրող լռությունը խզվեց ատոմական մեքենաների շչակների աղմուկով։

ԼԵՆԻՆՅԱՆ ԴԻՏԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԵՏԵՎՅԱԼ ՊՐԱԿՈՒՄ՝

Խորհրդավոր սենյակի բնակիչը։
Բնագետ թե ոճրագործ։
Էլեկտրական շարժակով Մեծ Անթևը։
Հրաշալի փոշին։
Գուլիկի կերպարանափոխությունը։

ՀԱՍ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0684793

ЦЕНА
379
211

ԳԻՆՆ Է 10 ՐԻԱԼ

№ 2927



Այս պրակը ծախել է՝ ..... ը:

ՇԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. Թղթանակալին պրակը առանց «Մանկական Պալատ»-ի կնիքի համարվում է անվավեր,

2. Մեքենայի նկարը եվ բիվը, պրակից կտրված լինելու դեպքում՝ զրկվում են վիճակին մասնակցելու ուժից,

3. «Մանկական Պալատ»-ի բարեկամները պրակը ծախելու դեպքում, պիտի մեքենայի նկարի տակ, պարզ եվ ընթեռնելի. գրեն իրենց անունը, ազգանունը եվ հայրանունը. առվնեսով ԱՑԴ ԹԻՎԸ. ՇԱՀԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԾԱԽՈՂԸ ԵՎԻՑ ՀՐԱՅԱՐԱԿՎԻՑ ԿՈՏԱՆԱ 2000 ՐԻԱԼ. (կանխիկ):

4. Վիճակահանությունը տեղի է ունենալու նաստուկ հայտարարությամբ 1949 թվի փետրվար ամսին,